ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ

ք. Երևան 28.12.2023թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով ՀՖԿՍՊԻ–ի Գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երևան, Ալ. Մանուկյան 11, 2–րդ մասնաշենք, 3–րդ հարկ):

**Նիստին ներկա էին Խորհրդի 20 անդամներից 12–ը՝**

Կարեն Գիլոյանը – ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Հոգաբարձունների խորհրդի նախագահ

Գոհար Մամիկոնյանը – ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ

Սերգեյ Աբրահամյանը – ՀՀ ԿԳՄՍ նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Արսեն Հակոբյանը – ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ

Սամվել Գևորգյանը – Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Էդուարդ Քալանթարյանը – Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան

Հարություն Ցավրյանը – ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Ռոբերտ Պետրոսյանը – Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ

Լաուրա Միրզոյանը – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Ժիրայր Դավեյանը – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Գայանե Չիլոյանը– ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մագիստրանտ

Ռոբերտ Պետրոսյանը – Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ

Լիանա Դուդուկչյանը – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մագիստրանտ

**Բացակայում էին՝**

Արսեն Միխայլովը – ՀՀ վարչապետի օգնական

Դավիթ Մոսինյանը – «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ –ի տնօրեն

Մարտին Ալիխանյանը- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս

Եղիշե Դավթյանը – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի մարզախաղերի ամբիոնի դասախոս

Մխիթար Խաչատրյանը – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս

Անահիտ Բարսեղյանը – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Վարինկա Ավագիմյանը – ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս, Հոգաբարձուների խորհրդի քարտուղար

Էրիկ Երվանդյանը – ՀՖՍԿՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

**Օրակարգ**

1.2022-2023 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ–ի գործունեության վերաբերյալ հաշվետվություն, այդ թվում նաև՝ 2023 թվականի բյուջեի կատարողականի ներկայացում:

(զեկուցող՝ Դավիթ Խիթարյան)

2. ՀՖԿՍՊԻ–ի 2024 թվականի բյուջեի նախահաշվի նախագծի հաստատում:

(զեկուցող՝ Դավիթ Խիթարյան)

3. ՀՖԿՍՊԻ–ի կառուցվածքի նախագծի հաստատում:

(զեկուցող՝ Դավիթ Խիթարյան)

4. Այլ հարցեր:

**Օրակարգի** հարցերի վերաբերյալ առաջարկությամբ հանդես եկավ Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը և առաջարկեց օրակարգի 1-ին հարցը լսել առանց 2022-2023 ուսումնական տարում ՀՖԿՍՊԻ–ի գործունեության վերաբերյալ հաշվետվության ներկայացման, քանի որ հաշվետվությունը շատ ծավալուն է, Խորհրդի անդամներին է ներկայացվել 2023 թ. դեկտեմբերի 27–ի ուշ երեկոյան, ուստի հնարավոր չի եղել ամբողջությամբ ծանոթանալ հաշվետվությանը: Գոհար Մամիկոնյանն առաջարկեց օրակարգի 1–ին հարցը լսել միայն ՀՖԿՍՊԻ–ի 2023 թվականի բյուջեի կատարողականի

մասով, այլ հարցերի մեջ ավելացնել Գոհար Մամիկոնյանի ելույթը ռեկտոր Դավիթ Խիթարյանին ուղղված հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Առաջարկությունն ընդունվեց միաձայլ:

**Օրակարգի 1-ին հարց**

Դավիթ Խիթարյանը ներկայացնեց ՀՖԿՍՊԻ 2023 թվականի բյուջեի կատարողականը՝ առանց կատարողականի վերաբերյալ ամբողջական և հիմնավոր ծանոթագրումների և դա պարզաբանեց նրանով, որ ֆինանսական տարին ավարտված չէ և կատարողականը հնարավոր չէ ներկայացնել դեկտեմբերի վերջին՝ դեռևս տարին չավարտված: Խորհուրդը չընդունեց հնչեցված պարզաբանումը՝ նշելով, որ ֆինասնական տարին արդեն ավարտվել է և ՀՖԿՍՊԻ պետք է պատրաստ լիներ ներկայացնելու 2023 թվականի բյուջեի կատարողականը, բացի այդ օրակարգային հարցի վերաբերյալ ռեկտորը չէր ներկայացրել առարկություն կամ հարցի զեկուցման անհնարինություն:

Խորհրդի անդամ Էդուարդ Քալանթարյանը զուգահեռ անցկացրեց պետական բյուջեի և ՀՖԿՍՊԻ բյուջեի միջև՝ նշելով, որ պետական բյուջեի կատարողականն արդեն իսկ հնարավոր է եղել ներկայացնել, այդ դեպքում ինչու հնարավոր չէ ներկայացնել ինստիտուտի բյուջեի կատարողականը:

Զեկուցող Դավիթ Խիթարյանը ներկայացրեց 2023 թվականի կատարողականն ըստ ճշտված նախահաշիվի և կատարողականի:

Խորհուրդը լսեց ռեկտոր Դավիթ Խիթարյանի զեկույցը և չհաստատեց 2023թ բյուջեի կատարողականը: Նիստին ներկա Խորհրդի անդամները միաձայն դեմ քվեարկեցին:

**Օրակարգի հարց 2**

Զեկուցող Դավիթ Խիթարյանը ներկայացրեց ՀՖԿՍՊԻ 2024 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը:

Հարցը զեկուցեց ռեկտոր Դավիթ Խիթարյանը՝ ներկայացնելով 2024 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը հարցադրում արեց, թե ինչպես են ձևավորվել նախահաշվի ծախսային հոդվածները, և արդյո՞ք հաշվի են առնվել 2023 թվականի նախահաշվի և կատարողականի ցուցանիշները նույն ծախսային հոդվածներով գումար հատկացնելիս: Հատկապես ավելացնելով ծախսը այն դեպքում, երբ նախորդ տարվա ընթացքում չեն կարողացել ավելի քիչ հատկացված գումարը տնօրինել ըստ նշանակության: Միաժամանակ նշվեց, որ նախագծով ներկայացված չեն նախահաշվի փաստաթղթային հիմնավորումները:

Խորհուրդը քննարկեց նախագիծը հաստատելու հարցը: Խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանը առաջարկեց հարցի վերաբերյալ քվերակություն չկատարել, այլ նախագծի քննարկումը տեղափոխել հաջորդ նիստ՝ հնարավորություն տալով շտկումներ իրականացնելու և պատշաճ կերպով ներկայացնելու 2024 թվականի բյուջեի նախահաշիվը:

**Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:**

**Օրակարգի հարց 3**

ՀՖԿՍՊԻ կառուցվածքի նախագիծը ներկայացրեց Դավիթ Խիթարյանը:

Խորհուրդը լսեց ներկայացված հիմնավորումները, անհրաժեշտ և կարևոր համարեց ՀՖԿՍՊԻ կառուցվածքի փոփոխությունը և նոր կառուցվածքի հաստատումը, սակայն ներկայացված նախագիծը համարեց ոչ պատշաճ հիմնավորված, միաժամանակ առաջարկեց կառուցվածքի նախագիծը քննարկել ՀՖԿՍՊԻ գիտական խորհրդում, իրականացնել լրամշակում, և ներկայացնել Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ամբողջական և հիմնավորված:

**Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:**

**Օրակարգի հարց 4**

1. Ելույթ ունեցավ Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը 2023 թվականի հոկտեմբերի 5-ին և նոյեմբերի 14-ին ռեկտոր Դավիթ Խիթարյանին ուղղված հանձնարարակների կատարման ուղղությամբ 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ռեկտորի կողմից Խորհրդին ուղարկված պարզաբանումների վերաբերյալ: Նշեց, որ կարիք չկա մանրամասն ներկայացնելու պարզաբանումները յուրաքանչյուր հարցի վերաբերյալ, քանի որ բոլոր անդամները ստացել են ռեկտորի գրությունը, հետևապես անդրադառնում է միայն որոշ հարցադրումների վերաբերյալ ոչ պատշաճ ներկայացված պարզաբանումներին:

Մասնավորապես, 1-ին հարցի պարզաբանման մեջ ռեկտորի կողմից չեն ներկայացվել հիմնավորումներ, փաստաթղթեր, ընթացակարգեր, որոնք ուղղակիորեն սահմանում են ռեկտորի իրավունքը խրախուսելու ՀՖԿՍՊԻ աշխատակիցներին, այդ թվում ռեկտորին:

**Առաջարկվեց՝** Խորհրդի հանձնարարականը ոչ պատշաճ կատարելու համար ռեկտորին հայտատարել կարգապահական տույժ՝ «նկատողություն»:

2. Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը ներկայացրեց, որ ռեկտորի պարզաբանումների մեջ հաջորդ հարցադրումը եղել է ՀՖԿՍՊԻ հաստիքացուցակի և աշխատավարձերի ձևավորման կարգի վերաբերյալ, այդ թվում նաև պահանջվել է ներկայացնել դասախոսների աշխատավարձերի համեմատական վերլուծություն՝ տարիների կտրվածքով ցույց տալով աշխատավարձերի բարձրացման հիմնավորումները: Փաստեց, որ հիշյալ հարցերի վերաբերյալ ռեկտորի կողմից չեն տրվել պատշաճ պարզաբանումներ:

**Առաջարկվեց՝** Խորհրդի հանձնարարականը ոչ պատշաճ կատարելու համար ռեկտորին հայտատարել կարգապահական տույժ՝ «նկատողություն»:

**Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:**

3 Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը ներկայացրեց, որ ռեկտոր Դավիթ Խիթարյանի կողմից ՀՖԿՍՊԻ շարժական գույքի վարձակալության պայմանագրերի վերաբերյալ պատշաճ պարզաբանումներ ներկայացված չեն:

Առաջարկվեց՝ ՀՖԿՍՊԻ–ի կանոնադրությունը խախտելու, Խորհրդի հանձնարարականը ոչ պատշաճ կատարելու և վարձակալության, ծառայությունների մատուցման պայմանագրերը ընթացակարգերին սահմանված կարգին ոչ համապատասխան կնքելու առնչությամբ ռեկտորին հայտատարել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»:

**Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:**

4. Հանդես եկավ Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը՝ նշելով, որ Խորհրդում քննարկված և չքննարկված մեկ տասնյակի հասնող տարբեր դեպքերով ռեկտորի գործունեության արդյունքում ՀՖԿՍՊԻ–ն հայտնվել է տարբեր իրավապահ ու վերահսկող մարմինների ուշադրության և ուսումնասիրության կենտրոնում, որի արդյունքում ՀՖԿՍՊԻ իր գործառույթները պատշաճ և որակյալ կատարելու փոխարեն հայտնվել է քննչական ու դատական գործընթացների մեջ: Նման իրավիճակում խաթարվել է վստահությունը ինստիտուտի ռեկտորի գործունեության նկատմամբ: Եվ Խորհրդին առաջակեց քննարկել ռեկտոր Դավիթ Խիթարյանի նկատմամբ Խորհրդի վստահության հարցը:

Խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանը առաջարկեց քվեարկել ստեղծված իրավիճակում ռեկտորին անվստահություն հայտնելու հարցը:

**Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:**

5. Ելույթ ունեցավ Խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանը և առաջարկեց ՀՖԿՍՊԻ գործունեությունը անխափան կազմակերպելու նպատակով նշանակել ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար:

Կարոն Գիլոյանը որպես ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար առաջադրեց ՀՖԿՍՊԻ Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Տիգրան Սիմոնյանի թեկնածությունը:

**Առաջարկությունը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն: Որոշվեց որպես Դավիթ Խիթարյանի աշխատանքային օր սահմանել 2024 թվականի հունվարի 3–ը: Հանձնարարվեց Տիգրան Սիմոնյանին ռեկտորի պարտականությունների կատարմանն անցնել 2024 թվականի հունվարի 4–ից:**

Նախագահ՝ Կարեն Գիլոյան

Քարտուղար՝ Գայանե Չիլոյան